



Ապարանի Օրհուս կենտրոնի
կատարած աշխատանքների տարեկան
հաշվետվություն
/փետրվար-նոյեմբեր/
2013թ.

Գործունեության եզրափակիչ հաշվետվություն

1. Նախարան և ընդհանուր տեղեկություններ ծրագրի մասին,

Կենտրոնի գործունեության ամփոփ նկարագիրը

Ապարանի բնապահպանական տեղեկատվության հասարակական (Օրհուս) կենտրոնը 2013թ. իր աշխատանքային գործունեությունը սկսել է փետրվարի 4-ին:

Հաշվետու ժամանակահատվածում ԵԱՀԿ «Համայնքային անվտանգություն» նախաձեռնությունից բխող ծրագրի շրջանակում (հիմնական նպատակն է իրականացնել աշխատանքներ ներառելով ոչ միայն շրջակա միջավայրի հետ անմիջական առնչություն ունեցող, այլև սոցիալական, առողջապահական, արտադրական անվտանգության, կրթական ու համայնքային անվտանգությունն անուղղակիորեն խոչընդոտող այլ հարցեր) կենտրոնի նախաձեռնությամբ և աջակցությամբ, անցկացվել են մոտ չորս տասնյակ միջոցառումներ՝ սեմինար - դասընթացներ հասարակայնության տարբեր տարիքային խմբերի և խավերի ներկայացուցիչների համար, հանդիպումներ SFU-երի, հասարակական կազմակերպությունների, ՁԼՄ-ների, հասարակայնության ներկայացուցիչների հետ, հարցումներ են ուղղվել պետական մարմիններին, հարցումների պատասխանների վերաբերյալ տեղեկատվություն և տարաբնույթ խորհրդատվություն է տրամադրվել բնակչությանը, կազմակերպել է հասարակական քննարկում, կյոթ սեղան քննարկումներ : Կենտրոնի համակարգող մասնակցել է հանրային լուսմների , միջազգային հանդիպումների, սեմինարների:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի միջոցառումներին մասնակցել են **454 մարդ** : Կենտրոնի ծառայություններից (գրադարան, ֆիլմոդարան, պատճենահանում,) օգտվել են ևս **97 մարդ**,

Հաշվետու տարվա ընթացքում մարզի բնապահպանական խնդիրների լուծման ուղղությամբ կենտրոնը համագործակցել է ԵԱՀԿ, տեղական իշխանությունների, ՁԼՄ-ների , հասարակայնության ներկայացուցիչների, մի շարք հասարակական կազմակերպությունների/ Կանաչների միություն ՀԿ, Էկոակադեմիա ՀԿ, Էկոդաշինք ՀԿ, Դալմա-Սոնա ՀԿ, Շողեր ՀԿ, Էկոիրավունք ՀԿ/ և փորձագետների / Ս.Մինասյան, Գ.Գաբրիելյան, Ս Ադամյան / հետ , կազմակերպվել են համատեղ այցելություններ Մելիքցյուղ համայնք, հանդիպումներ և քննարկումներ են տեղի ունեցել բնակիչների, համայնքի ղեկավարների, հանքը շահագործող ընկերության ներկայացուցիչների հետ, քննարկվել հանքավայրի շահագործման հետևանքով առաջացած բնապահպանական ռիսկերի և հետևանքների հարցը: Թուխմանուկի հանքավայրի խնդրի լուծման վերաբերյալ համայնքի ղեկավարության, բնակիչների առաջարկություններն ու կարծիքներն, դիտողություններն ու մոտեցումները ներկայացվել են կառավարությանը հասարակական լուսմների ժամանակ:

Կենտրոնի կողմից մշտապես իրականացվել է տեղեկատվության տրամադրում և տարածում: Տեղեկատվություն ստանալու հարցումների պատասխանները / Բնապահպանության, Արտակարգ իրավիճակների նախարարություններ, սանեպիդեմ ծառայություն, Թուխմանուկի ոսկու հանքավայրի տարածքից հողի և ջրի նմուշների լաբորատոր քննության արդյունքները, վերլուծությունների ու հետազոտությունների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է Մելիքցյուղ համայնքի ղեկավարությանը, բնակիչներին, բնապահպանական հասարակական կազմակերպություններին, հանքավայրը շահագործող ընկերության ներկայացուցիչներին, տարածվել է համացանցում/ :

Կենտրոնի իրագործված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը մշտապես տարածվել է www.aarhus.am , [Facebook.com`](https://www.facebook.com/aarhus.am) համացանցի սոցիալական խմբերում, www.aparan.am և այլ կայքերի միջոցով:



աշվետու ժամանակահատվածում բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի մասնակցությամբ, կենտրոնում և կենտրոնի նախաձեռնությամբ անցկացվել են մոտ **40 միջոցառում**:

Ստորև ներկայացվում է դրանց բաշխումը ըստ հանդիպումների տարատեսակների.

Աղյուսակ I

Անվանումը	Քանակը՝ 40	100 %
Հասարակական քննարկում	1	2.5 %
կլոր սեղան-քննարկումներ	11	27.5%
Հանրային լսումներ	1	2.5 %
Գործնական աշխատանքներ և արձագանքներ / շաբաթօրյակ, ծառատունկ, akcia UNEP /	3	7.5%
Այցելություններ, աշխատանքային և խորհրդատվական հանդիպումներ	10	25%
Դասընթացներ, սեմինար-քննարկումներ էկոլոգիական միջոցառումներ	9	22.5%
Շնորհանդես	2	5%
Միջազգային հանդիպումներ, սեմինարներ	2	5%
Փորձագիտական խորհրդի նիստեր	1	2.5%

Աղյուսակ II

Տարվա ընթացքում կենտրոնի այցելուների ընդհանուր քանակը	454	100%
ՀԿ ներկայացուցիչները	60	13.2 %
պատանիներն ու երիտասարդներ	99	21.8 %
ԶԼՄ ներկայացուցիչներ	11	2.5 %
տեղական ինքնակառավարման, տարածքային կառավարման մարմինների, այլ պետական կառույցների ներկայացուցիչները, գործարարներ	78	17.2%
Այլ /շահագրգիռ քաղաքացիներ/	206	45.3 %

Կենտրոնի ծառայություններից օգտվողների քանակը

Հաշվետու ժամանակահատվածում կազմել է ...97 մարդ:

Աղյուսակ III Ըստ ամիսների Կենտրոնի ծառայություններից օգտվողների քանակը՝

Աղյուսակ III 2013 թ. Կենտրոնի ծառայություններից օգտվել են 97 քաղաքացի					
month	Պատճենահ.	գրադարան	ինտերնետ	ֆիլմոդարան	Խորհրդատվութ.
Հունվար	4	1		2	
փետրվար	5	2		2	1
Մարտ	9	3		1	6
Ապրիլ	3	2	1	2	1
Մայիս	6	2		2	
Հունիս	4	1		1	
Հուլիս	2	1		2	
Օգոստոս	1	1		2	
Սեպտեմբեր	3	2		2	
Հոկտեմբեր	12	1		1	
Նոյեմբեր	2	1		1	
Ընդամենը՝ 97	51	17	1	19	9

Հաշվետու ժամանակահատվածում Ապարանի Օրհուս կենտրոնը համագործակցել է

ԶԼՄ-ների հետ: Կենտրոն են այցելել լրագրողներ Ա. Հովհաննիսյան Hayots Ashkhar daily/ Գ. Նանյան /Yerkir daily, Տ. Դանիելյան ,ԿԵՆՏՐՈՆ TV, տեղեկատվություն է տրամադրվել Թուխմանուկի ոսկու հանքավայրի հետազոտությունների վերաբերյալ: Ոսկու հանքավայրի, պոչամբաչների վերաբերյալ լրագրողների կողմից կատարվել են ուսումնասիրություններ, պատրաստվել են հրապարակումներ, հոդվածներ:

Հաշվետու ժամանակահատվածում Ապարանի Օրհուս կենտրոնում հրավիրվել է փորձագետների խորհրդի նիստ.

Մարտի 29-ին Օրհուս կենտրոնում կայացավ փորձագետների խորհրդի անդրանիկ նիստը, որի օրակարգում 2013թ առաջին եռամսյակի հաշվետվության ներկայացումն էր և 2013թ կենտրոնի գործունեության գլխավոր ուղղությունների նախանշումը:

Ապարանի Օրհուս կենտրոնի աշխատանքային գործունեության հիմնական ուղղություններ են նախանշվել.

- **Աջակցել** հանքարդյունաբերության առաջացրած բնապահպանական խնդիրների լուծմանը մեր տարածաշրջանում,
- **Նպաստել** թափոնների կառավարման արդյունավետության բարձրացման խնդիրներին /տարանջատված աղբահանությունը Ապարանում /,
- **Աջակցել** համայնքի գուղատնտեսության ոլորտին / Էկոլոգիապես մաքուր՝ օրգանական գյուղատնտեսություն, ալպյան մարգագետինների պահպանություն /:
- **Աշխատել** բնակչության էկոկրթության, էկոդաստիարակության, էկոգիտակցության բարձրացման ուղղությամբ::

2. Ծրագրի իրագործումն ըստ դրված նպատակների,

ՆՊՍՏԱԿ 1

Համայնքներում կազմակերպում է «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Օրհուսի կոնվենցիա) և շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող այլ միջազգային պայմանագրերի լուսաբանման աշխատանքները՝ պարզաբանելով դրանցով երաշխավորված հասարակայնության իրավունքները:

կատարված գործողություններ,

29.05.13. Ապարանի Օրհուս կենտրոնում կայացավ համատեղ դասընթաց << Օրհուսի կոնվենցիայի հիմնադրույթները>> (ներկայացրեց կենտրոնի համակարգողը) և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը (ներկայացրեց Գյումրու << ԱՄՊԱՐԵԶ ՀԿ >> ներկայացուցիչը) թեմայով :

Ձեռք բերված արդյունքները. Մասնակիցներն իմացան, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջության և բարեկեցության համար նպաստավոր շրջակա միջավայրում, և որ պարտավոր է անհատապես և մյուսների հետ համատեղ պահպանել ու բարելավել շրջ. միջավայրը, իսկ այս իրավունքի իրականացման համար տեղեկատվությունը պետք է մատչելի լինի քաղաքացիներին, նրանք պետք է ունենան որոշումների ընդունման գործընթացին մասնակցելու և արդարադատության իրավունք:

Ներկաները իրազեկվեցին տեղեկատվություն ստանալու կարգի, պատասխանների ստացման ժամկետների, գրավոր և բանավոր հարցման ձևերի տարբերությունների, գրավոր հարցման առավելության, մերժումների մասին:

կատարված գործողություններ,

03.06.13. Անցկացվեց սեմինար Օրհուս կենտրոնում <<Համայնքի համախմբում >> թեմայով <<Harmonia>> ՀԿ նախաձեռնությամբ. Ծրագիրն իրականացնում էր ԱՄՆ պետդեպարտամենտի ֆինանսական աջակցությամբ: Համայնքի բազմաթիվ խնդիրների լուծման ուղղությամբ կանոթ է համայնքի համախմբում, համայնքային առաջնահերթ կարիքների վերհանում և դասակարգում: Առաջարկությունների, կարծիքների, դիտողությունների ներկայացում ՏԻՄ-երին: Հանրության մասնակցություն համայնքի կառավարմանը:

Ձեռք բերված արդյունքները Սեմինարի մասնակիցներն իմացան, որ յուրաքանչյուր համայնքում կարող են ստեղծվել առանձին Համայնքային կամավորական ակտիվ խմբեր /3-5 հոգի/ , որոնք կնպաստեն համայնքի զարգացմանը, կմասնակցեն, քառամյա ծրագրերի, բյուջեյի մշակմանը, ընդունմանը, իրականացմանը, մոնիտորինգի ու գնահատմանը՝ կոռուպցիոն ռիսկերի կանխմանը

կատարված գործողություններ,

29.06.2013թ. Օրհուս կենտրոնում <<Harmonia>> ՀԿ նախաձեռնությամբ, ԱՄՆ պետդեպարտամենտի ֆինանսական աջակցությամբ իրականացվող Ծրագրի շրջանակում Ապարանի և հարակից համայնքների ՏԻՄ-երի ներկայացուցիչների, ավագանու անդամների մասնակցությամբ անցկացվեց Սեմինար << Տեղական ինքնակառավարումը և բյուջետային համակարգը կարգավորող օրենսդրությունը>> թեմայով:

Նպատակը՝

Ձեռք բերված արդյունքները Սեմինարի մասնակիցներն իմացան, որ համայնքի յուրաքանչյուր անդամ պետք է իրազեկված լինի և ակիվորեն մասնակցություն ցուցաբերի Տեղական ինքնակառավարմանը, համայնքի բյուջեյի ձևավորմանը և իրականացմանը:

ՆՊՍՏԱԿ 2

Հետևում է պետական մարմինների կողմից շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների ընդունման գործընթացին և դրանց ընդունման վաղ փուլում, հասարակայնության պատշաճ մասնակցությունն ապահովելու նպատակով, տարածում է համապատասխան տեղեկատվությունն ու կազմակերպում քննարկումներ (կլոր սեղաններ, բանավեճեր և այլն):

2.1 կատարված գործողություններ, 24.02.13. Տեղի ունեցավ Կլոր սեղան-քննարկում Մելիքցյուղի գյուղապետարանում ՏԻՄ-ի ներկայացուցիչների հետ. Քննարկմանը մասնակցում էին Կանաչների Միություն ՀԿ-ի, Գ. Սուխուդյան /Russian-Armenian (Slavonic) State University /, լրագրող Ա. Հովհաննիսյանը /Yerkir daily, Hayots Ashkhar daily/, Ապարանի Օրհուսի համակարգողը:

Նպատակը՝ Աջակցություն Համայնքի դիրքորոշմանը Թուխմանուկի ոսկու հանքի երրորդ պոչամբարի կառուցման վերաբերյալ:

Ձեռք բերված արդյունքներ: Համայնքի ղեկավարությունը տեղեկացվեց, որ հանքի, հարստացուցիչ ֆարրիկայի, պոչամբարների շահագործման ընթացքում ընկերությունը թույլ է տվել խախտումներ, ընկերությունը համաձայն հանքարդյունահանման լիցենզիայի / ՀԱ-Լ- 14/356, 05.08.05թ. 12 տարի ժամկետով / տրված տարածքը առաջին 2 տարում պետք է մշակվի բաց, որից հետո ստորգետնյա, ինչի համար առաջին 2 տարում պետք է կատարվեն ստորգետնյա փորվածքների կառուցում, ինչպես նաև լրահետախուզում, որ շահագործման ժամանակ հնարավոր են բացասական ազդեցություններ՝ մասնավորապես, գործունեությունը կարող է անդառնալի ազդեցություն ունենալ տարածաշրջանի խմելու ջրի անխափան մատակարարման և գետերի ջրերի աղտոտվածության վրա:

2.2 կատարված գործողություններ, 04.04.2013. Տեղի ունեցավ Կոնֆեռանս- Ընդերքօգտագործման բնագավառի խնդիրների քննարկում ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ:

ԵԱՀԿ և ՀԿ-ների, գիտական ոլորտի, Օրհուս կենտրոնների, ՁԼՄ , ՀՀ նախարարությունների, համայնքների ներկայացուցիչները քննարկեցին ընդերքօգտագործման բնագավառի խնդիրները «Համայնքային անվտանգություն» ծրագրի շրջանակներում, ընդերքշահագործումը Քասախ , Մեղրի, և Մարմարիկ գետերի հովիտներում:

Ձեռք բերված արդյունքներ: Հայաստանի բնապահպանները իրենց մտահոգությունն արտահայտելով Հայաստանում հանքարդյունաբերության խնդիրների վերաբերյալ՝ արձանագրեցին հանրապետության մի շարք վայրերում / Մեղրի, Ողջի, Քասախ, Մարմարիկ գետերի հովիտներ/, որտեղ հանքարդյունահանում է իրականացվում, առաջացել են առողջապահական, սոցիալական, բնապահպանական խնդիրներ: Այդ խնդիրների լուծման ուղղությամբ արված առաջարկություններն, դիտողություններն ու կարծիքներն ուղղվեցին կառավարություն:

2.3 կատարված գործողություններ, 14.03.13. Կազմակերպվեց Հասարակական քննարկում Մելիքցյուղի համայնքապետարանի, գյուղի բնակիչների, հանքարդյունահանող ընկերության, հասարակական կազմակերպութ. ԷԿՈԱԿԴԵՄԻԱ, ԿԱՆԱԶՆԵՐ ՀԿ, ՍՈՆԱ-ԴԱԼՄԱ, ԷԿՈԴԱՇԻՆՔ / և ՋԼՄ-ների մասնակցությամբ:

Նպատակը՝ ՀԿ-ների ներկայացուցիչները համայնքի բնակիչների համար հրապարակային ու մատչելի դարձրեցին Թուխմանուկի ոսկու հանքավայրի շահագործմանն առնչվող տեղեկատվությունը, հանքի շահագործ-ից համայնքի առջև ծառայած ու սպառնող բազմաթիվ բնապահպանական, սոցիալական ու առողջապահական խնդիրները:

Ձեռք բերված արդյունքներ: Հերթական անգամ համայնքի բնակիչներն իրազեկվեցին համայնքում իրականացվող ծրագրերին, պլաններին իրենց՝ որոշումների ընդունման գործընթացին մասնակցելու և արդարադատության իրավունքի մասին : Քննարկման ընթացքում խնդիրների լուծման ուղղությամբ, բնակիչների արված առաջարկություններն, դիտողություններն ու կարծիքներն (պոչամբարների ռեկուլտիվացիա, պոչամբարից արտանետվող փոշու և արտահոսող պոչանքի բաղադրության և դրանց շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա ազդեցության գնահատում) ՀԿ-ների միջոցով ուղղվեցին կառավարության համապատասխան մարմիններին:

2.5 կատարված գործողություններ, 14.09.13. Անցկացվեց Կլոր սեղան քննարկում - „Մելիքի խնդիրները,, ՀԿ-ների ներկայացուցիչների հանդիպումը Մելիքի բնակիչների և համայնքի ղեկավարի հետ:

Սպարանի Օրհուս կենտրոնը , Էկոդաշինք, Էկոակադեմիա, Էկո գլոբ Ամ ՀԿ-ները այց են կազմակերպել Մելիքցյուղ համայնք: Հանդիպում է կայացել բնակիչների, ղեկավարի հետ, քննարկվել գյուղի սոց-տնտ իրավիճակը, զարգացման հնարավորությունները և հեռանկարները:

2.6 կատարված գործողություններ, 24.09.13 Կազմակերպվեց կլոր սեղան քննարկում - Սպարանի Օրհուսի կենտրոնում ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի, Էկոդաշինք ՀԿ-ի, Էկոակադեմիա ՀԿ-ի , ՋԼՄ և հասարակայնության ներկայացուցիչների մասնակցությամբ : Քննարկվեցին տարածաշրջանի բնապահպանական խնդիրներ, Օրհուսի կոնվենցիայի դրույթների կատարումը գործնականում՝ Մելիքի Թուխմանուկի օրինակով:

2.7 կատարված գործողություններ, 24.09.13. Այցելություն Մելիք և Թուխմանուկի հանք: ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի, Էկոդաշինք ՀԿ-ի, Էկոակադեմիա ՀԿ-ի , ՋԼՄ, Սպարանի Օրհուս ներկայացուցիչների հանդիպում գյուղի բնակիչների հետ,

2.8 կատարված գործողություններ, 05.10.13. Անցկացվեց Կլոր սեղան քննարկում Օրհուս կենտրոնների ծրագրի ղեկավար Լ.Սառյանի, Երևանի Օրհուս կենտրոնի համակարգող Ս.Այվազյանի, անկախ փորձագետ Ս.Մինասյանի, լրագրող

Գ.Նանյանի, Ապարան քաղաքի հասարակայնության ներկայացուցիչների մասնակցությամբ: Միջոցառման նպատակը՝ քննարկել համայնքի բնապահպանական խնդիրները, մասնակիցներին տրամադրել շրջակա միջավայրին վերաբերող անկախ փորձագետ Ս.Մինասյանի կատարած հետազոտությունների վերաբերվող հավաստի տեղեկատվություն և վերլուծված տվյալներ, իրազեկել առողջ միջավայրում ապրելու քաղաքացու իրավունքի մասին:

2.9 կատարված գործողություններ, 05.10.13. Այցելություն Մելիք, Ռյա Թագա համայնքներ, Թուխմանուկի ոսկու հանքավայր:

Օրհուսի կոնվենցիայի իրականացմանն աջակցման ծրագրի ղեկավար Լ.Ասոյանը, Երևանի և Ապարանի Օրհուս կենտրոնների համակարգողներ Ս.Այվազյանը, Ն.Մանուկյանը, անկախ փորձագետ Ս.Մինասյանը, լրագրող Գ.Նանյանը այցելեցին Ռյա Թագա և Մելիքցյուղ համայնքներ նպատակը՝ բնակիչների հետ հանդիպելու, հանքավայրի շահագործման հետ կապված խնդիրները քննարկելու, անկախ փորձագետ Ս.Մինասյանի կատարած հետազոտությունների վերաբերվող հավաստի տեղեկատվություն և վերլուծված տվյալներ ներկայացնելու և լաբորատոր ուսումնասիրություններ անցկացնելու համար համայնքների տարածքում մշակվող բուսատեսակների նմուշներ վերցնելու :

Ձեռք բերված արդյունքներ Ապարանի Օրհուս կենտրոնը ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի, Օրհուսի կոնվենցիայի իրականացմանն աջակցման ծրագրի ղեկավարի, ՀԿ-ների, ԶԼՄ-ների աջակցությամբ, շարունակում է իրազեկման աշխատանքները՝ հնարավորինս ներգրավելով փորձագետներին, անընդհատ հանդիպումներ կազմակերպելով բնակչության հետ՝ տրամադրելով վերլուծությունների և հետազոտությունների վերաբերյալ նյութեր:

ՆՊՍՏԱԿ 3

Մասնակցում է հասարակական լուսմներին և տարածում դրանց ընթացքի, ինչպես նաև արդյունքում կայացված որոշումների վերաբերյալ տեղեկատվությունը:

31 կատարված գործողություններ, 19.04.13. Մասնակցություն „Թուխմանուկ,, ոսկու հարստացուցիչ հանքի նոր պոչամբարի նախագծի մասնագիտական լուսմներին ՀՀ բնապահպանության նախարարությունում: Մասնագիտական լսման ընթացքում բոլոր շահագրգիռ կողմերը ներկայացրել են իրենց առաջարկները, դիտողություններն ու մասնագիտական կարծիքները պոչամբարի շահագործման շուրջ:

Մասնագիտական լումներին մասնակցել են ԱԺ պատգամավորներ, Բնապահպանության, Արտակարգ իրավիճակների, Առողջապահության նախարարությունների, Մեզո Գոլդ ընկերության, Մելիքի համայնքի ներկայացուցիչները, Էկոլոգիկ ՀԿ-ի, «Դալմա-Սոնա» հիմնադրամի, «Հայաստանի կանաչների միություն» ՀԿ-ի, «Էկոլուր» ՀԿ-ի, Ապարանի, Երևանի Օրհուս կենտրոնների, «Էկոլոգիական իրավունք» ՀԿ-ի, «Էկոլոգիական ակադեմիա» ՀԿ-ի համակարգողները, Օրհուս կենտրոնների հասարակայնության հետ կապերի պատասխանատուն:

Մասնագիտական լուման ընթացքում բոլոր շահագրգիռ կողմերը ներկայացրել են իրենց առաջարկները, դիտողություններն ու մասնագիտական կարծիքները պոչամբարի շահագործման շուրջ: Ապարանի Օրհուս կենտրոնի համակարգողը նախարարի ուշադրությունը հրավիրեց Մելիքյուղի բնակչության դիրքորոշման, տարածաշրջանում առկա առողջական ու բնապահպանական խնդիրների վրա:

Ձեռք բերված արդյունքներ: Նախարարի կողմից հանձնարարվեց՝ ամենասեղմ ժամկետներում, գրավոր ներկայացնել բոլոր առաջարկություններն ու կարծիքները, որից հետո կտրվի համապատասխան եզրակացություն: Հենց այս լուման էլ հաջորդեց բնապահպանական փորձարկման բացասական եզրակացությունը:

ՆՊԱՏԱԿ 4

Կազմակերպում է հասարակայնության և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությանը նպաստող միջոցառումներ (համայնքի տարածքում առկա բնապահպանական խնդիրների վերհանման ու համատեղ ուժերով դրանց լուծումներ տալու վերաբերյալ քննարկումներ, շարաթորյակներ և այլն):

4.1 կատարված գործողություններ, Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնը աշխատանքներ է տարել համայնքի բնապահպանական խնդիրների լուծման աջակցության ուղղությամբ: Կազմակերպվել են հանդիպումներ, քննարկումներ փոխադարձապատի, կոմունալ ծառայության, բնապահպանության բաժնի ավագ մասնագետի, բնակիչների հետ քաղաքի աղբահանության, տեսակավորված աղբահանության խնդիրների լուծման ուղղությամբ: Բնակիչների առաջարկություններն ու կարծիքները՝ աղբամանների փոխարինում կափարիչով աղբամանների, աղբամանների քանակի ավելացում և այլն ներկայացվել են ՏԻՄ-ին:

Ձեռք բերված արդյունքներ: Քաղաքապետարանի նախաձեռնությամբ քաղաքի մարդաշատ վայրերում տեղադրվել են աղբամաններ պլաստիկ տարրաների համար: Բնակչությունը իրազեկվել է տեսակավորված աղբահանության կարևորության և անհրաժեշտության վերաբերյալ:

4.2 կատարված գործողություններ, 10.11.13. Ապարանի տարածաշրջանի բնապահպանական խնդիրների շարքում կարևորվում է ալպյան մարգագետինների պահպանությունը:

Մարգագետնային բուսածածկությունն առավելապես մեծ վնաս են պատճառում բնակչության կողմից կատարված հրկիզումները, հրդեհումները: Խնդիրը քննարկվել է քաղաքապետի, անտառտնտեսության պետի հետ: նշված խնդրի և հետևանքների մասին Օրհուս կենտրոնի կողմից կազմակերպվել են բնակչության իրազեկման և էկոլոգիական այդ իրավախախտումների սահմանված տուգանքների լուսաբանման միջոցառումներ, քննարկումներ ՏԻՄ-երի ներկայացուցիչների և բնակիչների մասնակցությամբ Իրազեկման նպատակով նամակներ են ուղարկվել տարածաշրջանի բոլոր համայնքապետերին, հայտարարություն է տրվել տեղական հեռուստատեսությանը:

4.3 կատարված գործողություններ 16.04.13. Քննարկում Ապարանի №2 դպրոցի ուսուցիչների հետ <<Վտանգավոր պուրակ>> թեմայով: Ջինկոմիսարիատի հարակից տարածքի /այստեղով է անցնում դեպի Ապարանի №2 դպրոց տանող ճանապարհը/ գերհասունացած, հաստաբուն, բարձր բարդիների պուրակի և համայնքին վտանգ առաջացնող բարդիների էտի անհրաժեշտության վերաբերյալ:

Ձեռք բերված արդյունքներ: Ուսուցիչների կողմից կազմվեց դիմում և ուղարկվեց քաղաքապետին համայնքին, բնակիչներին, աշակերտներին վտանգ առաջացնող բարդիների էտի անհրաժեշտության վերաբերյալ:

4.4 կատարված գործողություններ 04.05.2013. Շաբաթօրյակ և ծառատունկ Քաղաքապետարանի, Օրհուս կենտրոնի, հիմնարկությունների, բնակիչների մասնակցությամբ:

Նպատակը՝ քաղաքի մաքրման, կանաչապատման, բարեկարգման աշխատանքների իրականացում:

Ձեռք բերված արդյունքներ. Շաբաթօրյակը և ծառատունկը համախմբեց քաղաքի բնակիչներին մեկ գաղափարի շուրջ՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել իր բնակավայրի մասին, և նպաստել շրջակա միջավայրի էկոլոգիական վիճակի բարելավմանը:

ՆՊԱՏԱԿ 5

Շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ պատասխանատու վարքագծի ձևավորան գործընթացին խթանելու նպատակով՝ համայնքների բնակչության և համայնքային կազմակերպությունների համար կազմակերպում և անցկացնում է Էկոկրթական դասընթացներ:

Էկոկրթական դասընթացներ համայնքի հասարակայնության ներկայացուցիչների համար:

5.1 կատարված գործողություններ 17.04.13. Սեմինար. Ապարանի Ավագ դպր .ուսուցիչների համար. <<Հանքարդյունաբերությունը Արագածոտնի մարզում: Թուխմանուկի ռիսկերը >> թեմայով, <<Խարդախները>> ֆիլմի դիտում-քննարկում: Նպատակը՝ հասարակության լայն շերտերի մասնակցությունը բնապահպանության հարցերում, համայնքների, հասարակության լայն խավերի փոխհամաձայնեցված, գործունեության ապահովում:

5.2 կատարված գործողություններ. 15.07.13. Օրհուս կենտրոնի, հանքարդյունաբերական խնդիրներից բացի, ուշադրության կենտրոնում են ոչ պակաս վտանգավոր բնապահպանական, առողջապահական և սոցիալական այլ խնդիրներ:

Այս կապակցությամբ կենտրոնում կազմակերպվեց Մեմինար <<Խաղալիքների անվտանգության հարցերի շուրջ քաղաքացիական հասարակության երկխոսություն>> թեմայով:

Նպատակը՝ «Հայ կանայք հանուն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Թույներից ազատ խաղալիքներ» ծրագրի հետազոտությունների արդյունքների ներկայացում Ապարանի մանկապարտեզների ղեկավարներին և կոլեկտիվների անդամներին.

«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից իրականացված հետազոտությունները վկայում են այն մասին, որ հայաստանյան շուկայում իրացվում են ծանր մետաղներ պարունակող վտանգավոր խաղալիքներ:

5.3 կատարված գործողություններ. 17.06.2013. դասընթաց - <<Հանքարդյունաբերության ռիսկերը և տարածաշրջանի զարգացումը>> թեմայով, քաղաքի տնտեսական և հասարակական ոլորտների՝ ՏԻՄ-երի, ԳԱՄԿ-ի, սոցապահովության, կրթության ներկայացուցիչների մասնակցությամբ: Նպատակը՝ «Կանաչների միություն» ՀԿ նախագահ Հ. Սանասարյանը մասնակիցների ուշադրությունը հրավիրեց այն փաստի վրա, որ Թուլիմանուկի ոսկու հանքավայրի շահագործման հետևանքով, հնարավոր են բնապահպանական, սոցիալական, առողջապահական խնդիրներ ողջ տարածաշրջանում, քանի որ ընդերքշահագործումը իրականացվում է բնակավայրերի ու մշակովի հողատարածությունների համեմատ ավելի բարձր մակարդակների վրա: Ինչպես հայտնի է «լեռներում ամեն ինչ գլորվում է ցած», տեղի է ունենում նյութի միգրացիա լանդշաֆտային բարձր հարկերից դեպի ցածր հարկեր, այսինքն՝ հանքարդյունաբերության արգասիքները վտանգում են ոչ միայն Մելիքցյուղն ու հարակից տարածքները, այլև ցածր նիշերում գտնվող Հալավարի, Ապարանի ջրամբարները, Քասաղի ավազանում գտնվող հողատարածքները:

Էկոկրթական դասընթացներ կրթօջախների սաների, երիտասարդների համար

5.4 կատարված գործողություններ. 24.05.13. Դասընթաց Թոչունների պահպանության ՀԿ նախաձեռնությամբ Ապարանի №2 դպրոցում: Մասնակիցներն ընդլայնեցին իրենց գիտելիքները թոչունների դերի, նշանակության և պահպանության մասին: Հայաստանի թոչունների պահպանման միության ներկայացուցիչների պատրաստած շնորհանդեսի միջոցով ներկայացվեց <<գարնանն ընդառաջ>> ծրագիրը:

5.5 կատարված գործողություններ. 28.05.13. Դասընթաց Օրհուս կենտրոնում Ապարանի 1-ին դպր. Ուսուցիչների և աշակերտների, քաղաքի այգեգործությամբ զբաղվող փոքրատու բնակիչների մասնակցությամբ. <<Կենսաբազմազանության պահպանությունը գյուղական և քաղաքային միջավայրում >> թեմայով:

5.6 կատարված գործողություններ. 30.05.13. Դասընթաց << Հայաստանի էներգառեսուրսները>> Ապարանի №2 դպրոցի աշակերտների և SPAR խմբակի անդամների, ուսուցիչների համար:

SUՊԱՆ ԷԿՈԱԿՈՒՄԲ ՀԿ-ի նախաձեռնությամբ և Ապարանի Օրինու կենտրոնի աջակցությամբ կազմակերպվեց Էքսկուրսիա Հայկական ԱԷԿ,

2000 թ.-ից Հայաստանում իրականացվում է <<Էներգիայի և ռեսուրսների օգտագործման դպրոցական ծրագիրը>> (SPARE): Այն նաև կլիմայի պահպանմանն աջակցող միջազգային նախագիծ է:

<< Էներգիայի և ռեսուրսների օգտագործում >> նախագիծը աշակերտներին սովորեցնում է ճիշտ հարաբերվել շրջակա միջավայրի հետ, ինչպես պահպանել ստացած Ջերմությունը տանը և դպրոցում, չվատնել Էլեկտրաէներգիան, գազը, ջուրը՝ բացատրելով այդ խնայողության կարևորությունն ու նման ապրելաձևի իմաստը: Երեխաները սովորում են նաև, թե ինչ են վերականգնվող և չվերականգնվող էներգետիկ պաշարները, ինչ եղանակով են ստանում Էլեկտրաէներգիա, որոնք Էլեկտրակտրաէներգիայի ստացման այլընտրանքային աղբյուրներն ու եղանակները: Նախատեսվում է Էքսկուրսիաներ և բաց դասեր կազմակերպել նաև Հէկ-երում և ՋԷԿ- ում:

5.7 կատարված գործողություններ 30.05.13. Սանիտարական մաքրման աշխատանք ՀՀ Ատոմակայանի տարածքում SUՊԱՆ ԷԿՈԱԿՈՒՄԲ ՀԿ-ի , Ապարանի SPAR խմբակի անդամների, ուսուցիչների մասնակցությամբ, :

Նպատակը՝ պատասխանատու վերաբերմունքի ձևավորում շրջ.միջավայրի նկատմամբ:

5.8 կատարված գործողություններ 05.06.13. Շրջակա միջավայրի պաշտպանության օրը Երևանի մանկական զբոսայգում. Միջոցառումը կազմակերպվել էր Երևանի, Ապարանի, Եղվարդի Օրինու կենտրոնների, «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպության, «Օրբան» բարեգործական, «Երիտասարդ կենսաբանների ասոցիացիա» և «Եղվարդ» երիտասարդական- բնապահպանական ՀԿ-ների, «Օհանյան» և «Փոքրիկ իշխան» կրթահամալիրների համատեղ ուժերով, որի նպատակն էր շրջակա միջավայրի խնդիրների լուծմանը հասարակությանը ներգրավելն էր, օգտագործված պլաստիկի իրերից, մաշված անվադողերից պիտանի իրերի պատրաստում:

5.9 կատարված գործողություններ 13.09.13. Մեմինար Ապարանի 2-րդ դպրոցի ուսուցիչների և աշակերտների մասնակցությամբ <<Կլիմայական փոփոխություններ, օգնային շերտի պահպանություն>>

Ձեռք բերված արդյունքներ. Վերը նշված բոլոր միջոցառումների կատարման արդյունքում հասարակայնության տարբեր տարիքային խմբերի ներկայացուցիչները իրազեկվեցին բնապահպանական տարբեր խնդիրների, պատճառների, հետևանքների, գիտելիքներ ստացան դրանց լուծման վերաբերյալ:

ՆՊԱՏԱԿ 6

Կազմակերպում է Կենտրոնի ամենօրյա աշխատանքները, ապահովում է Կենտրոնի գույքի նպատակային օգտագործումն և պահպանումը: Կազմում, անհրաժեշտության դեպքում նաև լրամշակում և ներկայացում է Կենտրոնի տարեկան աշխատանքային պլանի նախագիծը, կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններն ու ֆինանսական փաստաթղթերը:

6.1 կատարված գործողություններ, Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի համակարգողի կողմից իրականացվել է կենտրոնի գրադարանի, ֆիլմոդարանի նյութերի համալրում: Տարվա ընթացքում կենտրոնի տարածքը տրամադրվել է ՀԿ-ների տարաբնույթ միջոցառումներ անցկացնելու նպատակով / թվով՝ 10 անգամ /:

Ձեռք բերված արդյունքներ: Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի ձեռնարկած քայլերը նպաստել են հասարակայնության շրջանում կենտրոնի նկատմամբ վստահության ձևավորմանը

6. Ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուները, համագործակից կառույցներն ու փորձագետները:

ԵԱՀԿ Մարզպետարաններ Քաղաքապետարաններ /ՏԻՄ-եր/ Նախարարություններ
ՀԿ-ներ Քաղաքացիներ ԶԼՄ-ներ:

7. Ծրագրով ձեռք բերված փաստացի արդյունքեր, քաղած դասեր և եզրակացություններ:

Ապարանի Օրհուս կենտրոնի 2013 թ գործունեության գլխավոր արդյունքը ՀՀ Բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական քացասական եզրակացությունն էր «Մեզո Գոլդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից փորձաքննության ներկայացված Արագածոտնի մարզի Թուխմանուկի ոսկու հարստացուցիչ ֆաբրիկայի նոր պոչամբարի աշխատանքային նախագծին:

Հանքավայրի շահագործման հետևանքով բնակչությանը և շրջակա միջավայրին հասցվող վնասները պարզելու և հանրությանն իրազեկելու նպատակով Ապարանի Օրհուս կենտրոնը ձեռնարկել է հանդիպումներ ոսկի-բազմամետաղային հանքավայրի աշխատակիցների ու գյուղի բնակիչների, ղեկավարության, շահագրգիռ բոլոր կողմերի՝ այդ թվում հանքը շահագործող ընկերության ղեկավարության հետ, կազմակերպվել են հասարակական քննարկումներ, որոնց ընթացքում հանրությունն իրազեկվել է իրավիճակի ու իր իրավունքների մասին: Կենտրոնին մեծ աջակցություն են ցուցաբերել ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը, բնապահպանական փորձառու հասարակական կազմակերպությունները, անկախ փորձագետները, ԱԾ պատգամավորը:

Օրհուս կենտրոնը հարցումներ է ուղղել համապատասխան ատյաններին: Ամփոփելով սրանց պատասխաններն ու փորձագետների վերլուծությունները՝ կենտրոնը իրականացրել է իրազեկման աշխատանքներ՝ հնարավորինս ներգրավելով ԶԼՄ-ներին, ՀԿ-ներին, անընդհատ հանդիպումներ ունենալով բնակչության հետ՝ հավաքելով նրանց կարծիքներն ու առաջարկությունները, որոնք էլ, ՀԿ-ների կողմից ուղղվել են կառավարություն, համապատասխան նախարարություններ:

3-րդ պոչամբարի կառուցման վերաբերյալ թվով երրորդ հասարակական լաման ժամանակ, որը տեղի ունեցավ Բնապահպանության նախարարությունում, Ապարանի Օրհուս կենտրոնի համակարգող նախարարի **ուշադրությունը հրավիրեց** Մելիքյուղի բնակչության դիրքորոշման, տարածաշրջանում առկա առողջական ու բնապահպանական խնդիրների վրա:

Օրհուս կենտրոնը իրականացրել է հանքավայրի շահագործման վերաբերյալ պետական մարմիններից բնապահպանական տեղեկատվություն ստանալու և հասարակությանը տրամադրելու, հասարակությանը փորձագիտական հետազոտությունների արդյունքների մասին տեղեկատվություն տրամադրելու, իրազեկելու իր առաքելությունը, ինչպես նաև խթանել է հասարակության մասնակցությունն այդ գործընթացներին:

8. Ծրագրի շրջանականերում ի հայտ եկած դժվարություններ և նոր լուծումներ:

Գյուղական համայնքների բնակիչների հետ հանդիպումներն ու քննարկումներն ցույց են տալիս, որ գոյություն ունի Օրհուսի կոնվենցիայի դրույթների վերաբերյալ բնակչության, հանրության, այդ թվում պետական պաշտոնյաների իրազեկվածության խնդիր:

Բնակչությունը տեղական մակարդակում թույլ է տեղեկացված իր իրավունքներին ըստ Կոնվենցիայի, կամ էլ գիտելիքները շատ սահմանափակ են, ցավոք, դա վերաբերում է նաև պաշտոնատար անձանց, հատկապես որոշում կայացնողներին:

Թուխմանուկի ոսկու հանքավայրի երրորդ պոչամբարի հասարակական լուսումները ցույց տվեցին, որ առկա է նաև հանրային մասնակցության խնդիր:

Բնակչությունը, համայնքի ղեկավարությունը տեղական մակարդակում ժամանակին չի իրազեկվում նախագծերի ՇՄԱԳ հասարակական լուսումների մասին, • հասարակական լուսումների անցկացման եւ վերջնական որոշում կայացնելու գործընթացում հաճախ հաշվի չի առնվում բնակչության տեսակետները, կարծիքը, դիտողություններն ու առաջարկները:

9. Ծրագրի գնահատում և շարունակականություն

Ապարանի Օրհուս կենտրոնի գործունեությունը Թուխմանուկի ոսկու հանքավայրի ուղղությամբ, **համահունչ է ԵԱՀԿ** «Համայնքային անվտանգություն» նախաձեռնությունից բխող ծրագրին, որի հիմնական նպատակն է իրականացնել աշխատանքներ ներառելով ոչ միայն շրջակա միջավայրի հետ անմիջական առնչություն ունեցող, այլև սոցիալական, առողջապահական, արտադրական անվտանգության, կրթական ու համայնքային անվտանգությունն անուղղակիորեն խոչընդոտող այլ հարցեր :

Ապարանի Օրհուս բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնը **շարունակելու է** աշխատանքը Մելիքյուղի գյուղապետարանի ղեկավարության, աշխատակիցների, համայնքի բնակիչների հետ, **քննարկվելու են գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունները, վերլուծվելու** համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարը: **Կարևոր է** Մելիքյուղ զարգացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների գնահատումը: **Անհրաժեշտ է** բացահայտել համայնքի համար ֆինանսական լրացուցիչ, այլընտրանքային աղբյուրի ներգրավման, սոցիալ – տնտեսական ծրագրերի իրականացման հնարավորությունները:

Հայաստանի Օրհուս կենտրոններ

Կենտրոնի համակարգող՝ Նատալյա Մանուկյան

E:mail : aarhusaparan@mail.ru

Info_aparan@aarhus.am

Հեռ: 252 6 22 60

094 22 49 26